

Կանոնավոր և անկանոն կոտորակներ

Համարիչ
հայտարար

Այն կոտորակը, որի համարիչը փոքր է հայտարարից անվանում ենք կանոնավոր կոտորակ:

Օրինակ՝ $\frac{5}{8}$ կոտորակը կանոնավոր է, քանի որ $5 < 8$:

Այն կոտորակը, որի համարիչը մեծ է հայտարարից կամ հավասար է նրան անվանում ենք անկանոն կոտորակ:

Օրինակներ՝

$\frac{7}{5}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 > 5$

$\frac{7}{7}$ կոտորակը անկանոն է, քանի որ $7 = 7$:

Առաջադրանքներ՝

Իրարից առանձնացրեք կանոնավոր և անկանոն կոտորակները.

$\frac{9}{5}$, $\frac{7}{14}$, $\frac{16}{15}$, $\frac{7}{18}$, $\frac{117}{25}$, $\frac{789}{855}$, $\frac{7}{3}$, $\frac{27}{35}$, $\frac{171}{95}$, $\frac{79}{95}$, $\frac{56}{65}$, $\frac{11}{11}$

Կանոնավոր կոտորակներ

$\frac{7}{14}$, $\frac{7}{18}$, $\frac{789}{855}$, $\frac{27}{35}$, $\frac{79}{95}$, $\frac{56}{65}$

Անկանոն կոտորակներ

$\frac{9}{5}$, $\frac{16}{15}$, $\frac{117}{25}$, $\frac{7}{3}$, $\frac{171}{95}$, $\frac{11}{11}$

Աստղանիշը փոխարինիր այնպիսի թվանշանով, որ ստանաս

կանոնավոր կոտորակ

$\frac{7}{9}$, $\frac{17}{34}$, $\frac{196}{215}$, $\frac{127}{198}$

Անկանոն կոտորակ

$$\frac{99}{19}, \frac{747}{314}, \frac{246}{215}, \frac{127}{117}$$

Համեմատեք.

$$\frac{7}{34} < \frac{8}{3}$$

$$\frac{27}{4} > \frac{82}{94}$$

$$\frac{9}{34} < \frac{8}{7}$$

$$1 > \frac{3}{4}$$

$$1 < \frac{4}{3}$$

$$1 = \frac{6}{6}$$

Արտահայտիր նշված միավորներով`

$$\frac{8}{5} \text{ դմ} = 16 \text{ սմ}$$

$$\frac{4}{10} \text{ մ} = 40 \text{ սմ}$$

$$\frac{6}{10} \text{ սմ} = 6 \text{ մմ}$$

$$\frac{4}{25} \text{ կգ} = 160 \text{ գ}$$

$$\frac{4}{15} \text{ ժ} = 16 \text{ ր}$$

Խնդիր1.

Մայրիկը իր պատրաստած գաթայի $\frac{1}{5}$ -րդ մասը տվեց Արմենին, $\frac{2}{5}$ -րդ մասը` Դավիթին, իսկ մնացած մասը` Սերգեյին:

Ո՞ւմ բաժինն էր ամենաշատը:

Դավիթն ու Սերգեյը

Խնդիր2.

Ավտոմեքենան պետք է անցնել 150 կմ ճանապարհ: Նա մինչև կեսօր անցավ ճանապարհի $\frac{3}{5}$ -րդ մասը: Որքա՞ն ճանապարհ նրան մնաց անցնելու:

$$150:5 \times 3 = 90$$

$$150 - 90 = 60$$

Խնդիր3.

Ամբողջ ճանապարհի $\frac{3}{4}$ -րդ մասը անցնելուց հետո ո՞ր մասը կմնա անցնելու:

$$\frac{4}{4} - \frac{3}{4} = \frac{1}{4}$$

Խնդիր4.

Գիրքն ունի 280 էջ: Գայանեն կարդաց գրքի $\frac{3}{5}$ -ը: Քանի՞ էջ մնաց կարդալու:

$$280:5 \times 3 = 168$$

$$280 - 168 = 112$$

Լրացրու բաց թողնված բառը(բառերը):

- Եթե կոտորակի համարիչը փոքր է հայտարարից, ապա այդպիսի կոտորակն անվանում են **Կանոնավոր** կոտորակ:
- Եթե կոտորակի համարիչը մեծ է հայտարարից կամ հավասար է նրան, ապա այդպիսի կոտորակն անվանում են **Անկանոն** կոտորակ:

